ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ՝ հետևյալ ավտոբուսային երթուղիների համար.

Հ/Հ	ԵՐԹՈՒՂՈՒ			
	անվանումը և համարը	սկզբնակետը	վերջնակետը	սպասարկման համար պահանջվող հիմնական և պահուստային ավտոբուսների քանակը
1.	Գեղարքունիքի մարզի միասնական երթուղիներ (Մարտունու և Վարդենիսի տարածաշրջաններ), որոնք ներառում են			Ընդհանուր՝ **46** *(36 միկրոավտոբուս և 10 անվազն 18 նստատեղ (առանց վարորդի նստատեղի) ունեցող ավտոբուս)* **հիմնական և 7** *(5 միկրոավտոբուս և 2 անվազն 18 նստատեղ (առանց վարորդի նստատեղի) ունեցող ավտոբուս)* **պահուստային** ավտոբուս
	ՄԱՐՏՈՒՆԻ- ԱՐԾՎԱՆԻՍՏ, ԹԻՎ 1	ՄԱՐՏՈՒՆԻ	գ. ԱՐԾՎԱՆԻՍՏ	2 միկրոավտոբուս
	ՄԱՐՏՈՒՆԻ - գ.ԼԵՌՆԱԿԵՐՏ, ԹԻՎ 2	ՄԱՐՏՈՒՆԻ	գ. ԼԵՌՆԱԿԵՐՏ	2 միկրոավտոբուս
	ՄԱՐՏՈՒՆԻ-ԵՐԱՆՈՍ, ԹԻՎ 3	ՄԱՐՏՈՒՆԻ	գ. ԵՐԱՆՈՍ	2 միկրոավտոբուս
	ՄԱՐՏՈՒՆԻ-ԾՈՎԱՍԱՐ, ԹԻՎ 4	ՄԱՐՏՈՒՆԻ	գ. ԾՈՎԱՍԱՐ	2 միկրոավտոբուս
	ՄԱԴԻՆԱ-ՄԱՐՏՈՒՆԻ, ԹԻՎ 5	ՄԱՐՏՈՒՆԻ	գ. ՄԱԴԻՆԱ	2 միկրոավտոբուս
	ՄԱՐՏՈՒՆԻ-ՎԱՐԴԵՆԻԿ, ԹԻՎ 6	ՄԱՐՏՈՒՆԻ	գ. ՎԱՐԴԵՆԻԿ	2 միկրոավտոբուս
	ԶՈԼԱՔԱՐ-ՄԱՐՏՈՒՆԻ, ԹԻՎ 7	ՄԱՐՏՈՒՆԻ	գ. ԶՈԼԱՔԱՐ	2 միկրոավտոբուս
	ՎԱՐԴԵՆԻՍ- ՍՈՏՔ, ԹԻՎ 1	ՎԱՐԴԵՆԻՍ	գ. ՍՈՏՔ	1 միկրոավտոբուս

	ՎԱՐԴԵՆԻՍ-ԿՈՒՏԱԿԱՆ, ԹԻՎ 2	ՎԱՐԴԵՆԻՍ	գ. ԿՈՒՏԱԿԱՆ	2 միկրոավտոբուս
	ՎԱՐԴԵՆԻՍ-ՓԱՄԲԱԿ, ԹԻՎ 3	ՎԱՐԴԵՆԻՍ	գ. ՓԱՄԲԱԿ	2 միկրոավտոբուս
	ԱՎԱԶԱՆ-ՎԱՐԴԵՆԻՍ-ՋԱՂԱՑԱՁՈՐ, ԹԻՎ 4	ԱՎԱԶԱՆ	գ. ՋԱՂԱՑԱՁՈՐ	2 միկրոավտոբուս
	ՎԱՐԴԵՆԻՍ- ԳԵՂԱՔԱՐ, ԹԻՎ 5	ՎԱՐԴԵՆԻՍ	գ. ԳԵՂԱՔԱՐ	1 միկրոավտոբուս
	ՎԱՐԴԵՆԻՍ-ԱԽՊՐԱՁՈՐ, ԹԻՎ 6	ՎԱՐԴԵՆԻՍ	գ. ԱԽՊՐԱՁՈՐ	2 միկրոավտոբուս
	ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ- ՎԱՐԴԵՆԻՍ- ԱՅՐՔ, ԹԻՎ 7	գ. ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ	գ. ԱՅՐՔ	1 միկրոավտոբուս
	ՎԱՐԴԵՆԻՍ - գ.ԱՐՓՈՒՆՔ, ԹԻՎ 8	ՎԱՐԴԵՆԻՍ	գ. ԱՐՓՈՒՆՔ	2 միկրոավտոբուս
	ՎԱՐԴԵՆԻՍ-ԵՐԵՎԱՆ, ԹԻՎ 302	ՎԱՐԴԵՆԻՍ	ԵՐԵՎԱՆ	10 առնվազն 18 նստատեղ (առանց վարորդի նստատեղի) ունեցող ավտոբուս
	ՄԱՐՏՈՒՆԻ-ԵՐԵՎԱՆ, ԹԻՎ 305	ՄԱՐՏՈՒՆԻ	ԵՐԵՎԱՆ	8 միկրոավտոբուս
	ՄԱՐՏՈՒՆԻ-ՎԵԴԻ, ԹԻՎ 306	ՄԱՐՏՈՒՆԻ	ՎԵԴԻ	1 միկրոավտոբուս

Ց Ա Ն Կ

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ՝ N 2 ձևի:

2.* Ավտոբուսների գրանցման վկայագրեր (ժամանակավոր կտրոն):

3.*Ավտոբուսի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի առկայությունը հավաստող փաստաթուղթ:

4.* Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ:

5. Հավաքակայանի սեփականության կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթեր, գիշերակացով երթուղիների դեպքում վերջնակետում ավտոբուսների կայանումը, պահպանումը, նախաուղերթային տեխնիկական զննումը և վարորդների բուժզննումն ապահովելու նպատակով կնքված պայմանագրեր:

6. Ավտոկայարանային ծառայություն մատուցող կազմակերպության հետ կնքված սպասարկման նախնական, իսկ ներհամայնքային փոխադրումների դեպքում երթակարգավարական ծառայություններ մատուցող կազմակերպության հետ կնքված ծառայություններ մատուցելու նախնական պայմանագիր (գործող պայմանագրի առկայության դեպքում նախնական պայմանագիր չի պահանջվում):

7. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևոր և ուղեբեռ (եթե սահմանված է) փոխադրավարձը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների (սույն պահանջը չի վերաբերում համայնքներում անցկացվող մրցույթներին):

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կողմից սոսնձված և ստորագրված փաթեթով:

Փաթեթների բացման օրը, ժամը և վայրը՝ 2024 թվականի հունիսի 24-ին, ժամը 11:00 հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը՝ 2024 թվականի հունիսի 28-ին, ժամը՝ 11:00, գ. Վերին Պտղնի, Երևան-Սևան ավտոմայրուղի, 2/14 շենք:

Հայտը ներկայացնելու օրը, ժամը, վայրը և վերջնաժամկետը՝ հայտերը պետք է ներկայացվեն մինչև 2024 թվականի հունիսի 21-ը ժամը 17:00 հետևյալ հասցեով՝ ք Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Հեռախոսահամարը՝ լրացուցիչ տեղեկություն ստանալու համար՝ 010 511 356:

***Չի ներկայացվում հայտ-պարտավորագիր ներկայացնելու դեպքում:**

Էլեկտրոնային փոստի հասցեն՝ mtai.secretariat@gmail.com

Երթուղիների չվացուցակները ներկայացված են հետևյալ հղումով՝ https://www.mtad.am/pages/timetables?file=panel7151

Մրցույթին ներկայացվող ավտոբուսների ընդհանուր թվի առնվազն 10%-ը պետք է հարմարեցված լինի հաշմանդամների (տեղաշարժվելու, տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց) նստեցման և իջեցման համար:

Մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջների համաձայն:

Հայտ-պարտավորագրով մասնակցելու դեպքում Կարգի 22.1 կետի պահանջներին համապատասխան մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը պետք է ստորև նշված հաշվեհամարին մինչև 2024 թվականի հունիսի 27-ը ժամը 12:00 փոխանցեն սահմանված քանակով ավտոբուսների ընդհանուր արժեքի 2.5 տոկոսին համարժեք գումար՝

Հ/Հ 900008000730